ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3647-Ա « 05 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի 04.08.2025 թվականի N 01/24/24847-2025 գրությամբ ստացված հրավերը և Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի 01.09.205 թվականի № Ն/50300-25 զեկուցագիրը՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպվող «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» եռափուլ դասընթացին մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ Մարիամ Մարտիրոսյանին՝ 2025 թվականի սեպտեմբերի 6-ից 10-ը ներառյալ, հոկտեմբերի 7-ից 11-ը ներառյալ, նոյեմբերի 5-ից 8-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ Մարիամ Մարտիրոսյանի բացակայության ընթացքում սպորտի և երիտասարդության հարցերի վարչության

գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության գլխավոր մասնագետ Արշալույս Գասպարյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ